

# ՔՐՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑՈՒ

(Շար.)

Արարական ճակատից վերադառնալուց յետոյ 642ին մինչև Սասանեան անկումը 652, տանն տարուան ընթացքում, Ջեւանչէրի գործունէութիւնը ամփոփում է քանի մի ընդհանրումների մէջ Ատրպատականի իշխանի «քաջերի» հետ մի աննշանակ առթիւ: Զորավարներն անուն չկայ, յիշուած է «Դելմապպի ոմն հեղինակ», այսինքն Դելումնացի մի զորավար առանց անունը տալու: Պէտք է կարծել որ սրբանք զրկուած են Խոռոխագատի կողմէն: Սակայն այս զորավարը, ինչպէս երեւում է Սեբեոսից, բաժանուած է Յազկերտից եւ հնազանդուած է Արարներին: «Նւ իշխանը Մարաց, զորմ է վերագոյն ասացի եթէ դնաց յարեւսյա առ արքայն իւրեանց, ապատմեալ ի տեղի մի ամրացաւ եւ խնդրեաց երրուան յիմայեւաջուոցն եւ դնաց յանապատն ի ծառայութիւն իամայելացւոցն» (Սեբեոս, էջ 137): Ո՞վ է այս իշխանն Մարաց, որի մասին վերագոյն խօսել է պատմագիրը, բայց «վերագոյն» այդ մասին յիշատակութիւն չկայ: Նահաւենդի կոնիւր Սեբեոսի մօտ այն կոնիւն է որ նա կոչում է «պատերազմի Մարսոս դաւառի», ինչպէս պարզ հետեւում է տարեթուից՝ յառաջում ամի Կոստանդեան (641+11=) 652 եւ յամի տասներորդի Յազկերտի (632+10=) 652, եւ որը նկարագրուած է էջ 112. սակայն վերեւ, էջ 108, խօսելով թէ ինչպէս Խոռոխագատ փորձեց փրկել Տիգրանի դանձերը, բայց չկարողացաւ, թողեց ամէն ինչ եւ փախաւ. «փախեաւ եւ թաւաւորն իւրեանց եւ անկաւ ի գաւրն հարաւոյ»: Յազկերտ փախաւ, բայց Նահաւենդի կոնիւց

յետոյ, եւ փախաւ Ստահր թաղաքը, Սասանեանների որրանը: Սեբեոս չտապել է յայտնել թագաւորի փախուտը նախ քան անդադաւանալ Նահաւենդի ճակատին: «Անկաւ ի գաւրն հարաւոյ» ասելով ակնարկում է փախուտը Ստահր: Պարսից պետութիւնը բաժանուած էր չորս մեծ զինուորական շրջանի կամ սպարապետութեան, որոնցից մէկն էր Քոնստի Նեմոռը, այսինքն կողմն հարաւոյ, ուր գտնուում էր եւ Ստահր: Յազկերտ ապաստանեց Ստահր, ուրեմն հարաւային դնդի մօտ: Այստեղից անցաւ արեւելք, Որասան, ուր եւ սպանուեց: Սեբեոսի խօսքերը՝ «դնաց յարեւսյա» կարծել են տալիս որ Խոռոխագատ ուղեկցել է Յազկերտին, յետոյ փորձել է մի վերջին ընդիմադրութիւն եւ արագ զէնքը վայր դրել: Արդե՞ք վերագարձել է նորէն Ատրպատական եւ ե՞րբ, մնում է անյայտ:

Դիտենք որ 643 թուին Ատրպատականի իշխանն էր յիշուած Վահրամ Բ. Փառոխզատ: Վերջին անունն նոյն Խոռոխագատն է: Սա եղբայր էր Ռոստոմի եւ երկուսն՝ որդիք էին Պառխուրմիդի, ծանօթ Սեբեոսին (էջ 107): Խոռոխագատ նշանակում էր ըրի Պոռխի: Կարելի է իբր բռն, անունն էր Վահրամ: Բայց արելի հաւանական է որ Վահրամ նրա որդին էր: Խոռոխագատ այդ միջոցին պէտք է սակաւին Յազկերտի հետ լինէր:

Տարբարին պատմում է որ Հիջրի 22 = 642 Նոյ. 30 — 643 Նոյ. 18, արարական զօրքը բուկայիր Բ. Արդալլահ զօրավարի առաջնորդութեամբ յաղթեց յիշեալ Վահրամին, պար-

տաղբից Ատրպատականին վճարել հարկը որ չէր ուզում վճարել, յանձնեց երկիրը իր դինակիցներէրց մէկին, եւ ինքը դնաց Դերբենդի դէմ: Նոյն պատմարանը նկատում է որ Ատրպատականը ընդարձակ երկիր է, Համադանից մինչեւ Դերբենդ, Պաղարաց սահմանը: Բուկայիբի յառաջագահ զնդի պետն էր Արդիւր-Ռահճման (1) Բ. Ռարաբ: Դերբենդի գնալիս անցան մի երկրով, որի իշխանն էր Շահճիբար: Սա խաղաղութիւն խնդրեց, առանց հարկ տալու յանձնառութեան, պատճառելով որ մշտակա՞ն կուի ունի Պաղարանի դէմ մ իջնոցները սուղ են (2):

Շահճիբար Աղուանից իշխաններից մէկը պիտի լինի: Ջեւանշէր չէ յիշուում: Պոռիզպադի ներկայութիւնը այդ միջոցներից Ատրպատականում երկբայակարն է: Կարանիատուացու պատմութեւք այն կէտում եւս խախտու է: Թերեւս մեր պատմագիրը չափազանցել է թեթեւ ընդհարումները որ միշտ հնարաւոր են եւ կապել մեծ զօրավարի անուան:

Դիւրմնագրի հեղինակը, այսինքն զօրավարը, եւս անյայտութիւն է: Աւելորդ չէ յիշել այս առթիւ Սերէոսի մի միջոցնէպը: Մարք ապստամբում են Արարների դէմ, չուզնալով վճարել հարկ, եւ ապաւինում են իրենց ամբողջութեանը եւ լեռնական ցեղերին, ինչպէս Գեւ (Գեւանցիք) եւ Դելումն: Վերջինս եւս մի ցեղ էր, Գեւանցիների հարեւան, եւ որոնց յիշատակ մնացել է Դիլաման, եւ Դիլամն տեղանունների մէջ: Արարները չեն յաղորմէրկնէլ ապստամբների, եւ «զէմ եղին երթալ ի կողմանս Հիւսիսոյ, յազգն որ ըստ Կասբիական դրացն: Չոզան հասին ի կապանս Ճորայ եւ անցեալ ընդ ներքս ընդ կապանս, աւերեցին դամենայն կողմանս աշխարհին որ առ լեռնոտամբն» (Սերէոս, էջ 147—148):

1) Յոսիամ Մամիկանեան, էջ 61, յիշում է ոմն Արդաանիմ քեռորդի Մամիկեդք, որ յարձակուեց Տարսոնի վերայ իսարովի սպանութիւնից ութ տարի յետոյ, ուրիմն 640ին: Դժուար թէ այս անձը պահած լինի Արդէր-Ռահմանի յիշատակը:

2) Tabari (= Zotberg) III, ch. 47.

Այս դէպքը տեղի է ունեցել, մեր հաշուով, մերձաւորապէս 654 եւ ուրեմն չի կարող նոյնանալ Բուկայիբի արշաւի հետ որ 643 էր եւ ոչ էլ Դիւրմնագրի հեղինակի ստատականութեանը ընդ որ 642ից յետոյ էր եւ 652ից յառաջ: Կարանիատուացին յիշում է Վրաց իշխան Ատրներսեհին, որ այլուտա յայտնի չէ եւ կը փորձենք ստորեւ որդիւն նրա ինքնութիւնը:

Ամբողջ ժժ՞ գլխի մէջ միակ անվիճելի կէտն է Սասանեանների անկման տարին «ի քսաներորդի ամի Յազկերտի» համամայն Սերէոսի էջ 137, եւ 31 ամի Հաղարացիք—651 օդ. 24-652 օդ. 11, փոխան Սերէոսի ժժ՞ Իմայիլացուց որ հաշուում է Արուսեբրի վերջին տարուց եւ ոչ Հիլլիի թուականներից:

Մեր պատմագիրը առանց բացատրելու թէ ե՞րբ եւ ի՞նչ պայմաններում էր Ջեւանշէր ընդունել արքայական տիրապետութիւնը, եւ թէ ինչո՞ւ իր հայրը կողմնակից էր այդ տիրապետութեան, պատմում է թէ ինչպէս «բազմամաստ Ջեւանշէր վճռեց անցնել կայսեր հովանաւորութեան տակ Հայոց զօրավարի հետ միասին:

Ջեւանշէր դիմում է թղթով կայսր Կոստանդինի եւ խնդրում իր հնապանութիւնը եւ պարզեւել «պսակաբազդիկ խոնարհութեանս մերում աստուածաշնորհ բարեբարութիւնս»:

Կայսրը, հարկաւ, ուրախ է եւ հրամայում է «զրիլ երդմունս եւ ունիլ համամիտ խաղաղութիւն»: Ծնորճում է նաեւ մեծամեծ պարզեւներ զահճոյս արծաթաքանդակակերպ թիկամք օսկեզօծ եւ հանդերձս օսկեմանեալս եւ զիւրաջ անձին մարդարտայեռ պատենիւք սուսեր. եւ առնէ զնա պոստոն պատրիկ: Եւ տայր բերել պատրիկութեան եւ հիւպատութեան եւ ապա Հելպարքոսութեան եւ սորաւանութեան եւ ելխատութեան հազարերկերիւր արանց պատիւ, զի որում ինքն կամեցի, շնորհեցէ եւ նա զայն: Եւ ի կենդուտ խաչէն Քրիստոսի մասն, զոր միշտ ի ծոց իւր կէր, հանեալ յիւրմէ տառքէր նմա» (Բ. Ի.):

Պատմագիրը բերում է կայսերական հրովարտակի պատճէնը, ուր սակայն խօսք չկայ նուէրների մասին, այլ կայսրը յայտնում է իր ուրախութիւնը եւ խոստանում որ ինքը եւ իր

որդիք սիրով եւ զազգրութեամբ կը վարունեն Ջեւանչերի եւ նրա սերունդի հետ զազգէ յազգ մինչեւ յաւիտեան» (Ք. ԻԱ) :

Կայսեր հրովարտակն իր ձեւով եւ բովանդակութեամբ վաւերական չէ կարող համարուել եւ ոչ Ջեւանչերի թուղթը: Հների մօտ ընդունուած սովորութիւն է յօրինել ճառեր եւ թղթեր եւ վերագրել գործող անձերի: Այս կարգի յօրինուածներ են եւ Ջեւանչերի եւ կայսեր նամակները: Առասպելական են մանաւանդ կայսերական ընծաները. արծաթաքանդակ եւ սոկեղծ գահեր, ոսկեհուռ հանդերձներ, կայսեր անձնական մարգարտայն սուսերը, տաւախն շասկանայի եւ նոյն իսկ իրենց շախազանդութեան մէջ, բայց ինչ որ աւելի է քան առասպել, այդ 1200 մարդու յատկանիւի գանազան պատիւներն են, պատրիկութիւն, հիւպատոսութիւն, ապահւպարքոսութիւն (իմա՝ ապուէպարքոսութիւն), սարատելոսութիւն (իմա՝ սարատելատոսութիւն), եւ իխուսութիւն (իմա՝ իխիստրութիւն (illustris) : Ասել է թէ կայսրը իրաւունք էր տուել Աղուանից իշխանին յանձնարարել 1600 մարդ թուած պատիւներ ստանալու համար: Ուրիշ իտաղով, եթէ լիովին զործադրուէր այդ իրաւունքը, Աղուանքը կ'ունենար 1200 պատրիկ, հիւպատոս, ապուէպարք, սարատելատ եւ իխուսր:

Պէտք է կարծել որ պատմագիրը լաւ չէ հասկացել այն աղբիւրը որից օգտուել է, զաղելով բիզանդական պատուամունշները աստիճանական ստոյգ կարգով: Կայսերական պատիւների անդուղջ հարում էր 18 աստիճան, ամենաբարձրը՝ կեսար եւ ամենէն ստորը՝ սարատելատ, որին հասար էր ապուէպարքոս (apo eparchon): Հիւպատոս եւ թիւսեպարք ստիճանն էր վայրից վերեւ, իսկ պատրիկ տասներկերորդ: Մեր պատմագիրը յիշում է այս աստիճանները վերից վայր կարգով՝ պատրիկ, հիւպատ, ապուէպարքոս եւ սարատելատ: Ելիստութիւնը, այսինքն իլիւստրութիւնը այս կարգին չէ պատկանում: Բոլոր աստիճանները բաժանուած էին երեք դասի՝ illustris, spectabilis, clarissimus . Թրւած չորս պատուաստիճանները կարող էին պատկանել իլիուստրիս դասին:

Այս տիտղոսը պատահում է եօթներորդ դարու մի արձանագրութեան մէջ: Քրտան եւ եւթնեւեայ Հերակղի բարեպաշտ թագաւորի ներսեհի Շիրակայ եւ (Ա)րշարունեաց տեսնն եւ թէնփիրոսի Աշարունեաց եպիսկոպոս(ի) եւ Գրիգոր եղաւտր եւ Մարիամ իմ կին ինեցաց զուրք Եկեղեցիս վասն մեր հոգւոց» (1) : Եղաւտր նոյն illustris ն է:

Հետաքրքրական է պտոտն պատրիկ տիտղոս որ շնորհուած էր Ջուանչերին: Հաղուսդիւտ տիտղոս է. ուղիղ ձեռք է պրոտոպատրիկ, protopatrickios: Մեկ յարսնի է միայն մի դէպք բիզանդական պատմութեան մէջ, ուր երեւան է գալիս այս տիտղոսը, եւ ինչ որ դարձանայի է՝ կրոյր մի Հայ է, Վարապակուր, Ba(ra)s Bakourios protopatrickios (2) . ապրում էր Յուստինեան Բ-ի օրով, նրա պաշտպան էր ընդ դէմ Վարզանֆրիկի Հայ կայսրի եւ սպանուեց 711 թուին: Հաւանական է որ Աղուանից իշխաններից լինի, դատելով անունից:

Ամենին կարելորը սակայն մեր պատմագիրի աչքում կենդանու խաչի նուէրն էր: Կաթողիկոսը Ուխտանէս՝ եպիսկոպոսների հետ՝ դուրս է գալիս խաչի առաջ եւ օրհնում իշխանին: Ուրախութիւնը մեծ էր. բայց սովորական ուրախութիւն չէր. «ոչ ինչից գործ անկարդ իտից կամ արբեցութիւնք կամ կատակերգութիւնք: Ջեւանչէր պրկելով իրեն քրնից՝ դիչերը անցուց զխորհրդով զաշխարհին իւրոյ օյուտն»: Եւ առաւօտուն, հազիւ արուտեակը ծագած, բազմից գահի վերայ, եւ շրջապատուած յօրականներով, դրապից դասական եւ վարչական գործերով: «Այսպէս ի սահմանացն Վրաց մինչեւ ի դըրոնս Հոնաց միահեծան ճոխութեամբ եղեւ տէր եւ մինչեւ ցգեան Երասխ»: Այս եւս ներբողան է եւ ոչ իսկութիւն, ինչպէս կը տեսնենք:

1) Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ, Վիմակն տարեգիր, էջ 1, օյատուկ անուն է կարծիլ, միջնդեռ Հ. ԱԼԻՇԱՆ, Շիրակ, էջ 125, տուել է միշդ նշանակալիւնը:

2) Theophanes, chronographia, . էջ 583. Schlumberger, Sigilographie, 249 եւ 627, Վարապակուրի կնիքը, ուր սակայն կոչուում է patrickios, եւ comes Օփսիկեանք քեմի:

Կոստանդին կայսրը իր Թագաւորութեան 19րդ տարին զարիս է արեւելք, զնոս Պարսից աշխարհը եւ մարդ է զրկում Ջեւանշէրի ետեւից, որ գայ իր տեսութեան: Ջեւանշէր շտապով ուղի է ընկնում, «զորոյ զգան լսելով ըզդ առաջ նմա ինչն ելանէր ի Բունդր գիւղ եւ ողջամբ ընկալեալ զնա»: Կայսրը հրամայում է նրան հանել շարիքակաջ գրեւորը՝ որ հաղել էր իր կնոջ մահուան առթիւ, եւ հազցրին «գարգռնական գրեւորս»: Ջեւանշէր համարձակութիւն ատնելով «խնդրէր ի կայսերէ զմասն յաւիտենից Թագաւորի նշանին»: Կայսրը բերել էր մայրաքաղաքից «զճարտազայթաւէտ զլոյս աշխարհաց», (1) այսինքն խաշափայտը:

Կայսրը կտրում է մի մասը եւ տալիս Ջեւանշէրին: Տեսնելով այս «երկնաւոր պարգեւ», հայ նախարարները եւ Հայոց զորավար Համադասալ նախանձեցին: Ջեւանշէր հրաժեշտ սուռա այնուհետեւ կայսրին եւ սա «նչ իբրեւ զժառանգ ոք, այլ իբրեւ զեղբայր համաբաժն՝ յանդիման Պարսից եւ Արարատեան արքայացն զնա յուղարկեալ»:

Ուխտանէս կաթողիկոսը ընդառաջեց ընդունուեալ ի իշխանին: Սա հիմն է զնում նոր եկեղեցու Պարզման բերդի մէջ, որպէսզի այնտեղ պահէ «տէրութեանկան նշան»ը, կայսրից ստացած խաչի մասը:

Գարնանը զմաց Վաղարշապատ նորէն հանդիպելու կայսրին: Արտակարգ շքով ընդունուեց: Կայսրի հրամանով մեծամեծ պալատականներ ընդ առաջ ելան, եւ Ջեւանշէր «արքունարար» մտաւ «կայսերական մարդարան»:

1) Բնագրի «կորգեալ ի պիտանեաց զկողման աշխարհին», նշանակում է գրկեց խաչից արեւմտեամ կողմերը, առնելով հետը սուրբ նշան Արեւելք: Երէ շիտակ է «այիտանեաց» ընթերցումը, նշանակում է որ կայսրը գրկեց այն կողմի աշխարհը այն բանից որ ամենապիտանին էր, այսինքն խաչը: Խկ երբ պէտք է կարգալ՝ «ի տանեաց», քերտու ի մկատի ունի Ս. Սովի տանարը, կորգեց Ս. տանարից այն == Սլովոգով ձեւժոտ շ յուցեմոմիվզ մա շըզ

կաչը: Մեր հեղինակը նարտասանակցմ մեծ յաւակնութիւններ ունի:

Կայսրը նրան ընդունեց «խնդամիտ համբուրի» եւ նստեցրեց ամենէն բարձր տեղը եւ այնքան պատեւներ շուայեց որ «տրապէզդիտքն անգամ սոյլացան»: Կայսրն արրին զրկել էր Ջեւանշէրին իր անձնական սուները: Այս անգամ նրան նուիրում է «զքաջ հաւուն իւրոյ Հերակլիոսի եւ Նիկետայ հանույն զարգունական գոտին», եւ «զիւրն պատմուհան եւ դրօշս երկուս եւ զորդիս նորա ստնէր պատրկունս տղայականս»:

Պարսից վերջին թագաւորը, տեսնել վերել, շնորհել էր Ջեւանշէրին «զիւղատատնուեալս եւ գետս ձկանց»: Այժմ կայսրը եւս նըրան է զիջանում «որ միանգամ առաջին թագաւորացն Աղուանից գիւղատանեայք եւ սահմանք լեալ էին»: Ջեւանշէրի «հանճարեղ խորհրդականութիւնը» հիացում պատճառեց կայսրին. հրամշտին՝ ստաց կայսրը. «անձն ջո ընդ անձին իմոյ, եւ սիրտ իմ որպէս զգիրտ ջո. երթ ի խաղաղութիւն»: Ջեւանշէր վերադարձաւ իր աշխարհը եւ հրամայեց իւրայիններին՝ «չինել, տնկել, վայելել եւ կեալ ի խաղաղութեան»: Ջեւանշէրի հռչակը ստարճունեց Աղուանից սահմաններէց գուրս, Թուրքաստանեաց Թագաւորից, Ատրպատականից, Վրաց աշխարհից ընծաներ տեղացին. անգամ հեռաւոր Հնդկաստանից «զային առ նա լսել եւ տեսանել»:

Ի՞նչ էր այս յարողութեան պատճառը: Պատմագրի հայեացքով, միակ պատճառն էր «փայտն կենաց, նա յայտնի արբը զանուն նորա ամենայն տիգերաց» (Բ. ԻԲ.):

Ոսքն այն կենաց փայտի մասին է որ Ջեւանշէր ստացել էր կայսրից եւ որի համար եկեղեցի էր հիմնել Գարդմանի բերդում: Ջեւանշէրի պանծացումը այդ կենաց փայտի Գարդմանի այդ սրբութեան պանծացումն է: Բարբերաստարար հնարաւորութիւն կայ ըստուկելու Ջեւանշէրի վերաբրած յարաբերութիւնները կայսրի հետ եւ համոզուելու որ այս տեղ եւս իստում է ո՛չ պատմագիրը, այլ վիպասանը, ոյ՞ տալով իր անասնձ երեւակայութեան:

Կոստանդինի 19րդ տարին կ'անէ (641+19 =) 650 : Այս թուին Կոստանդին չէ գտնուել ո՛չ Պարսկաստան եւ ոչ ընդհանրապէս Արեւելք : Նա կ'աւ Հայաստան իր Թագաւորութեան 12րդ տարին, համաձայն ճշմարտաբոս Ժամանակակից պատմիչի՝ Մերսուս վիպաութեան (էջ 139), աշխինքն 653 թուին : Մուս. Էփրատի հետ կայսրը դա՛ն էր կնքել երեք տարով (Սեբէոս, էջ 118 եւ 138, ըստ Թէոփանի, էջ 297, երկու տարով) : 652 թուին լրացաւ պայմանաժամը եւ Մուսուհա մերժեց վերանորոգել դաշինքը եւ սպառնում էր խաղալ մայրաքաղաքի վերայ : Այս միջոցին էր որ Թէոդորոս Ռչտունի անգոր համարելով կայսեր հովանաւորութիւնը անցաւ տակի ուժեղի՝ խայրիպալութեան կողմը : Կոստանդինի կայսր Ժամանակ Դերջան, անցաւ Կարին : Նրան ներկայացան բոլոր հայ եւ մեծ նախարարութիւնները ներսն ածաւորութեամբ Թէոդորոսի դէմ : Սա հրաժարուեալ ներկայանալ կայսրին : Նա մենակ չէր իր որդեգրած նոր քաղաքակնութեան մէջ . զորք նմա էին, ասում է Սեբէոս, միաբարձր Վրացին եւ Աղուանն եւ Միւնիս, որք ըստ հրամանի նորա գնացին յիւրաքանչիւր աշխարհաւ եւ ամրացան ի նմին» (էջ 139) :

Կայսրը փորձեց իր կողմը գրաւել Ռըշտունեաց իշխանին, բայց չյաջողեց : Կարինից դեպ Դուին եւ այնտեղ ձմեռեց : Մուշեղ Մամիկոնեանին, Նշանակեց «իշխան Հայոց հեծելոցն եւ արձակեց ի կողմն սեպհական գընդին դ . հազարաւ . նոյնպէս արձակեաց ի զարաց իւրոց ի Վիրս եւ յԱղուանս եւ ի Միւնիս քակել գնասա ի միաբանութեանէ . . . բայց յԱղուանն եւ ի Միւնիս եւ դուռնի սեպհական ոչ հնազանդեցան» (Սեբ . էջ 140) : Պարզ է որ Աղուանք 652-653 թ . կայսեր կողմնակից չէր :

Կայսրը լսելով որ տանիկ զորքը, իրաւ, ստպատակելով Փոքր Ասիա, հասել է Բաղկէդոն, անմիջապէս վերադարձաւ մայրաքաղաք, Թեղնիլով Հայաստանում Մարտան զորավարին (Սեբ . էջ 143, Թէոփանի, էջ 528) : Թէոդորոս Ռչտունի օգնական զօրք ստացաւ Արաբներից, Չատկի մօտերքը 653 յարձակուեց Հռոմոսի վերայ եւ հարածեց մինչև Տայք

եւ այնտեղից Տրապիզոն : Ապա գնաց Մուսուհա յի մօտ Դամասկոս : «Եւ ետ նմա իշխանն Իսմայէլի, պատում է նոյն Սեբէոս, հանդերձս ոսկեղէնն եւ ոսկեթիւրն եւ վառ մի նորին օրինակաւն : Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս եւ զՎիրս եւ զԱղուանս եւ զՄիւնիս մինչև ցիպալ . կոն եւ ցպարիակն ճորայ եւ արձակեաց գնա պատուով» (Սեբ . էջ 143) :

Կոստանդինի կայսեր հետնաջուրց յետոյ Մուշեղ Մամիկոնեանը լքեց Յոնիերին եւ յարեցաւ Թէոդորոս Ռչտունուն : Թերեւս այս միջոցին եկաւ արար դորավար Հարիր Բ . Մասլամա : Սեբէոսի ասելով, նա կոխներ մղեց Մարտանի դէմ, զլեց մինչև «ի Վիրս», պաշարեց եւ առաւ Կարինը : Արդեօ՞ք յոյն զօրավարը նորէն Հայաստան էր եկել Տրապիզոնից ուր զլէլ էր նրան Թէոդորոս Ռչտունին, թէ Հարիրին կոխները նոյնն են ինչ որ վերեւ ընծարուեց Թէոդորոսին : Հաւանական է որ Հարիր լինէր այն արար գնդի պետը որ եկաւ Թէոդորոսի օգնութեան ևւ միասեչ գործեցին Մարտանի դէմ :

Օթման խայրիպայի գահը վստայի մէջ լինելով, Հաբէր յետ հռչուեց Հայաստանից, բայց տեղ չհասած, Օթման սպանուեց : Սեպհակոն թիւր տեղի ունեցաւ 656 թուին, յունիսի 17 : Հետեւարար Հաբիր հեռացած պիտի լինէր Հայաստանից նոյն 656 թուին : Գիտնեք որ Թէոդորոս գնաց երկրորդ անգամ Դամասկոս, այնտեղ մեռաւ եւ մարմինը բերին ևւ թաղեցին իր գաւառում : Մեկ թուով է որ նա գնացած պիտի լինի Հաբիրի հետ եւ նոյն նպատակով : Օթմանի մահից յետոյ սկսուեցին երկու թեկնածուների՝ Մուսուհայի եւ Ալիի միջև կոխները որ տեւեցին հինգ տարի : Մուսուհա պէտքն ունէր Թէոդորոսի : Անհաւանական չէ որ մնաց այնտեղ՝ մասնակցեց կոխներին եւ մեռաւ 657 կամ 658 թուին : (1)

1) Ներսէս Կաթողիկոս գնաց 653 թուին կայսեր հետ Կ . Պոլիս եւ դարձին զդադարեաց ի Տայս մինչև մեռաւ Ռչտունեաց տէրն» եւ ապա վերադարձաւ Վաղարշապատ շինտ վեցերորդի ամի հալածանացն : Վեցերորդ տարին հաշուելով 653 կը գայ 658 : Բայց որով

Ալիի հակառակութիւնը Հարկադրեց Մուսախային խաղաղութիւն խնդրել կայսրից, խոստանալով սալ օրական հազար ոսկի, մի ձի եւ մի սարուկ: Դաշինքը կնքուեց 659 թուին: Ռչառունին կենդանի չէր, նրան յարժրուել էր իր փեսայ Համազասպ Մամիկոնեան:

Հայերն ապստամբեցին Արարների դէմ եւ անցան կայսեր կողմ: Թուում է թէ այս քաղաքակառ փոփոխութիւնը պէտք է բացատրել 659 թուի դաշինքի ազդեցութեամբ: Դաշինքը մերկացրեց խալիփայի տկարութիւնը եւ Հայերը յարմար դատեցին թոթափել նրա լուծը:

Համազասպ Մամիկոնեան, որ Թէոդորոս Ռչառունու փեսան էր եւ գաղափարակից, համակերպուեց նոր կաթոլիկեան, ստացաւ կայսրից կիրարկազատութեան պատիւ, արծաթէ դահոյք եւ երկրի իշխանութիւնը:

Այս անգամ Հայոց հետ համերաշխ էին Աղուանք եւ Միւնիք. «հապճեպ երթեւեկով հնադարեղեցաւ ի ծառայութիւն թագաւորին Յուսէպ հանդերձ միաբանութեամբ իշխանացն եւ գաւառքն Աղուանից եւ իշխանացն աշխարհին Միւնեաց» (Սեբոս, էջ 152):

Համազասպ կառավարեց կիրարկազատութիւն ստանալուց յետոյ երեք տարի եւ մեռաւ ինչպէս վկայում է Յովհաննէս Կաթողիկոսը (էջ 51), մեռաւ, ուրեմն 661 թուին: Այս թուին Մուսախայ յաղթանակեց եւ հռչակուեց միահեծան տէր (661 թ. մայիս): Իր իշխանութեան երկրորդ տարին Գրիգոր Մամիկոնեան կարգուեց իշխան Հայոց: Ասել է թէ Հայերը նորէն ընկան արաբական իշխանութեան տակ: Այս դրութիւնը տեւեց երեսուն տարի, մինչև 682 թուականը:

Ահա քաղաքական անցքերի ստոյգ ընթացքը. 652-659 Աղուանք ըարուեսակեց մնալ արաբական տիրապետութեան տակ: Հերակլի յաղթութեամբ Պարսիկները զիջան Հայաստանը

հետեւ ներսւս Կաթողիկոս անրկայացաւ կայսեր Կարիսում «եկեպ ի Տայոց», հուամական է որ փայտել էր Տայգ 652 թուին Թէոդորոսի արաբական հպատակութիւն ընդունելու տարին: Այս շէպէում հայաժամափ վեցերորդ տարին կը լինի 657:

Մաւրիկ կայսեր օրով սահմանուած դժով, ուրով Պարսից ձեռքն էր մնում Վասպուրական, Միւնիք, Աղուանք եւ Այրարատից Դուինի դաշտը: Արաբները ժառանգեցին Պարսիկներէց այս հողամասերը: Թէոդորոս Ռչառունին տէր էր այս բաժնի եւ իրապէս հաւատարիմ մնաց հին կացութեան:

Աղուանք եւ Միւնիք անբաժան էին Թէոդորոսից: Կոստանդին կայսրի Դուին եղած ժամանակ ո'չ Աղուանից եւ ո'չ Միւնեաց իշխան չներկայացաւ նրան: Առաջին անգամ Աղուանք եւ Միւնիք թեքուեցին կայսր կողմ 659 թուի ապստամբութեան: Ոչ այդ թուին եւ ոչ յետոյ Կոստանդին կայսրը Հայաստան չի եղել եւ ուրեմն չէր կարող Աղուանից իշխանին ընդունել Վաղարշապատի մէջ եւ օտտել արքայական պատիւներով:

Ուշադրութեան արժանի է Հերակլ պապի եւ Նիկիտաս սատրի արքունական դատին որ իբրեւ թէ նուէր տուաւ Կոստանդին Ջեւանչէրին: Կոստանդին կայսրի բռն անուանն էր Կոստաս կամ Կոստանդ, բայց անուանում է նաեւ Կոստանդին իր հօր Կոստանդինի անունով որ Հերակլի որդին էր: «Նիկիտայ հանույն» անգիտութեան թէ թիրխացութեան արդիւնք է: Հերակլի ընտանիքում ծանօթ է մի Նիկիտաս որ Հերակլի հօրեղբօր Գրիգորի որդին էր: Նիկիտաս կնոջ անուն չէ եւ Կոստանդին հանին չէր կարող այդպէս կոչուել եւ ոչ էլ այդպիսի դատի ունենալ որ կարելի լինէր գարդարել Աղուանից իշխանի մէջը:

Կոստանդինի երեք չէ եղած Մարաց Գունդր զիւղում, ուրեմն եւ չէր կարող ո'չ Ջեւանչէրին անդ ընդունած լինել եւ ո'չ էլ նրա համար կենեղութ խաչն մաս հանել:

Կոստանդինի չէր կարող նշանակել Ջեւանչէրին իշխան «ի սահմանս Վրաց մինչև ի դրունս Հոնաց միահեծան ճոխութեամբ»: Տեսանք որ Մուսախայ եւ ո'չ Կոստանդին տուաւ աղբ երկրները մինչև Ծորայ պահակ Թէոդորոս Ռչառունու եւ ո'չ Ջեւանչէրին:

Աղուանից իշխանի պատիւները որպէս թէ տեսնելով Համազասպ Մամիկոնեան «ի նախանձ մեծ բրդեցաւ»: Մրանից հետեւում է որ մեր պատմագիրը ի նկատի ունի 659 քաղաքա-

կան փոփոխութիւնը Համադասայի օրով: Եթէ Կոստանդին առաջին տարին հաշուենք 641 թիւը, երբ զա՛հ բարձրացաւ, 19րդ տարին կը գայ ուղիղ 659: Անտարակոյս պատմագիրը չիօթիւ է 652 թուին բակոսիոս զա՛հներէ եւ 659 թուին կնքուած դա՛շնբի ազդեցութեան տակ հասարուած իրողութիւնները: Համազասպ անցնելով կայսրի կողմը ստացաւ կերպապատուութիւն: Աղուանք նրա հետ էին եւ հասանակա՛ն է որ միտժամանակ կայսրը պատուած պիտի լինի Աղուանից իշխանին պրոտո-պատրիկ սիտղոսով: Եւ այս կը լինի միակ պատմական կորիզը որի շուրջ զիղիւ է պատմագրի երեւակայութիւնը այնքան անհեթեթ զրոյցներ խառնակութիւն յիշողութեամբ: Զեւանչրի կրկնակի տեսակցութիւնը Կոստանդին կայսրի հետ 659 թէ 660 թուին այլ բան չէ հայգէս քան խուլ յիշողութիւն Կարինի նւ Դուինի կայսերական զիմաւորութեան, 652 եւ 653 թուերին: Միայն Դուինի փոխարինուած է Վաղարշապատով Եւ Կարին սոռոցուած ի նպաստ Մարաց աշխարհի Բունզըր գիւղի: Արատական է մասնաւոր վերջինս: Հեղինակի նպատակը չէ միայն վերապահել պատուաւոր աթոռ սիրեցեալ իշխանին բոլոր այդ հանդէսներէ մէջ, այլ փաստարանել նաեւ կենդուտ խաչի բարձր ծագումը: Քունզըր արդարեւ գտնուում է Մարաց աշխարհում եւ է Կանգուար Համադանի մաս: Հերակ կայսր, երբ 627 թուին արչաւում էր Տիրոսնի վերայ, անցաւ Համազանից, ինչպէս պատում է Թէոփան (էջ 488), անուանելով այս քաղաքը Նամաէթա (Chamaetha), ուր կայսրը դարձար առաւ Զոկոտեթերի Ծին եւ մընաց մէ շարաթ: Քունզըր առաջին մեծ կայսրանէ էր Համադանից յետոյ իր ճանապարհի վերայ: Կենդուտ խաչը կապ չունի Կոստանդին կայսրի հետ, այլ հասանօրէն ասանդութեամբ Համարուում էր մաս Հերակիլի փրկած Երուսաղէմի խաչափայտի: Յարյոնի է Հացունեաց Ս. Նայի պատմութիւնը: Կենդուտ խաչի ասանդութիւնը լուսադոս, դէպքում Աղուանից կրկնակն է Հացունեաց խաչի պատմութեան, ասում ենք լուսադոսն դէպքում, այսինքն եթէ գոյութիւն է ունեցել որեւէ ասանդութիւն, որից օգտուել է իւրովի մեր պատ-

մագիրը, եւ չենք ուզում համարել ողջովին պատմագրի անձնական տեսութեան, պտուղ: Մեր հեղինակը հետաքրքրութեան բուն ասորական կենեկուտ խաչն է, Գարգմանի սրբութիւնը: Նրա արժէքը բարձրացնելու համար ի՛նչ աւելի զօրեղ միջոց, քան կայսր եւ Աղուանից իշխանի անունները:

Կայսրից խաչն ստանալուց երկու տարի յետոյ Նազարներն արչաւում են եւ Զեւանչրի նոյն խաչի զօրութեամբ յետ է մղում մինչեւ Չոդաչ գուրը: Անցնում է երկու տարի եւս եւ Զեւանչրի աւարտում է Գարգմանի տաճարի շինութիւնը եւ այնտեղ գետեղում մեծ հանդէսով «կենեկուտ փայտը»: Մնկաչոք ընկնում է նրա առաջ եւ աղօթում: «Եթէ ամենայն աշխարհն Աղուանից, ասում է Զեւանչրի աղօթքի մէջ, միաբան դաջցն փառաւորել զանուն քո ի տանս յայսմիկ, աստուածընկալ զօրութեամբ խաչիս աղիեսցես զգրուանս թշնամեացն եւ խափանեսցես զմարտիցն Հէնս»: Գարգմանի Ս. Նայչը մեծ ապաւն է Աղուանից ապաւնութեան եւ բարօրութեան:

Պատմագիրը՝ Համակիր քրիստոնեայ պետութեան, բայց գիտէ որ իր հերոսը պիտի դաւաճանէ եւ անցնէ մուսուլման Արարների կողմը: Այդ ծանր քաջով մի կերպ արդարացնելու համար, Զեւանչրի բերան է դնում մաղթանք՝ «Տնաղանդ կալ առ ի քէն պսակլոյ կայսերն Յունաց աներկբայաբար», կամենալով ցոյց տալ որ Զեւանչրի երեսը դարձրեց կայսրից հանդուանքների ուժով եւ ոչ իր բուն ցանկութեամբ:

Աղօթքից յետոյ իջնում է Պերոզ-Կաւատ քաղաքը « եւ զամն ողջոյս յղձալի եւ ի խաչադաւէտ», անցուցանել հանգիստ (Բ. ԻԾ.): Յաջորդ տարին, «ի միւսումս լինէր մծնոնային եղանակի հասարակութիւն», ուրեմն կայսր տեսակցութեան վեցերորդ տարին. Հոնները յարձակում են Աղուանքի վերայ, հասնում մինչեւ Երասու եւ քում տանում են Արարատեան» զաւառոց եւ «միւնաստանեաց» աշխարհէն բազմաթիւ հօտեր: Հոնաց թաղաւորը ցանկութիւն է յայտնում տեսնել Զեւանչրին: Սա դնում է ներկայանում առանց երկիւղի, մինչդեռ Պարսից թաղաւորներից ոչ միւր նման

խիզախութիւն չի ունեցել: Աէր եւ խաղաղութեան հնչում: Ջեւանշէր ստեղծ է Հոնաց Քաղաքի դուստրը կոտիթեան: «Վնքեալ զդաւեթն», բաժանում են: Ջեւանշէրի սպարապետութեան 28րդ տարին էջ:

Այս յարողութեան պատճառը նորէն Գարգմանի Ս. Պաշն էր. նախ բան Հոնաց մօտ դնալը, իշխանը « սնեքիւղաբար անկեալ առաջի փրկչական խաչին ասէ. Թէպէտ եւ զնացից ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի շարէ, զի դու, Տէր, ընդ իս ես»:

Տեսնե՞ք որ Ջեւանշէր սպարապետ նշանակուեց Կաղեխայի կոտիթ տարին, 637-ին: Պարսից Քաղաքութեան անկման տարին 652ին նրա սպարապետութեան 15րդ տարին էր, ինչպէս հաշուում է պատմագիրը (Բ. ԺԹ), որ միանգամայն ճիշդ է, 637 + 15 = 652: Այժմ հաշուում է 28 տարի, 637+28=665: Այս եւս հաստատում է Հեղինակի միւս հաշուով. կայսրին ներկայացաւ 659 թուին եւ այն օրին անցել էր վեց տարի, ուրեմն 665:

ժամանակագրական այս հաշիւը իրստ կարեւոր է այն մտքով որ վկայում է հաստատօրէն որ Կոստանդնի Զրդ տարին հասարակ վրեպակ չէ գրչի, այլ պատկանում է Հեղինակին (1):

Այնուհետեւ պատմագիրը ձգտում է բացատրել թէ ի՞նչպէս Ջեւանշէր վճռեց անցնել սարաբական ծառայութեան, թէ շորչէս կամ զինչ պատճառ Հնորհատուն այն խաչ ծաղեաց նմա ի խաւարէ լոյս կամ քաղէլ ծաղիկ չոյր»:

Պատճառը բարձր չէ: Կար ժամանակ որ Հոռոմոց Քաղաքները այնքան դժուար էին որ սարգսի էին ազդում աշխարհին: Այժմ աբկարացել են, «մինչ զի որ միանգամ ընդ ձեռամբ նորա էին մարդկային անտառը, զնացեալ յարեցան ընդ հովանեաւ » Արաբներէ: « Արեւմտեան ջուրը » զրկուեց Աստուծոյ օգնու-

թեմից եւ «կինճ վայրենի» զաղանացաւ փըլբելու նորա եղջիւրները: Հոռոմոց կայսրը Քորդեց իր մայրաքաղաքը եւ զնաց « ի սահմանս հռուստր կղզեացն արեւմտից »: Իսկ Արաբները վեցերորդ տարին է որ հաստատուել էին նոր մայրաքաղաքում՝ Դամասկոս: Պատմագիրը հնարաւոր է գտնում զոգիւրից արարական տիրապետութիւնը. «տուաւ նմա անընդհիմակաց զօրութիւն, աշխարհավար իմաստ, երկրավար քաղցրութիւն եւ հեղութիւն մարդկային »: Ենորհիւ այս չորս յատկութեան Արաբները տիրեցին աշխարհին:

Ջեւանշէր գգում է որ Արաբները զուցէ ասպատակին իր երկիրը: Թէպէտ կարող էր իր խնամքի «Քուրքաստանեաց» աշխարհէն զօրք հանել թշնամու գէմ, բայց բարւոք համարեց խնարհել Արաբներէ առաջ:

«Հարաւոյ բունկալը» լսելով իշխանի լաւ յարաբերութիւնը կայսրի հետ եւ այն թէ ինքն է «երասանակալ Քուրքաստանեացն աղբաց հանել եւ արգելուլ », պատգամաւոր դրկեց եւ ինչդեց զալ իր մօտ: Ջեւանշէր զնաց նախ Գարդմանի տունար, ուր իր սիրելի խաչն էր, աղօթեց եւ ապա ուղի ընկաւ: Հայոց զօրավարը զիմաստրեց նրան մեծապատիւ շքով, դեմաւորեցին նաեւ Ասորեստանի զաւաւապետները եւ քաղաքների պետերը, Քաղաքորի հրամանով, հայ թայթելով ճառագարհին ձիեր եւ օթեւաններ եւ հասաւ Քաղաքորի դուրը: Սա հրամայեց իր մերձաւոր մեծամեծներին ընդառաջել Աղուանից իշխանին, « անելով նմա զերիվարս յորս ինքն Քաղաքորն հեծանէր: » Ամբողջ Քաղաքում էր ամէն կողմից նրան տեսնելու: Քաղաքորն վաղ առաւօտեան, վեր կենալով սովորական ժամից յառաջ, ընդունեց հրճուանքով Քանկազին հիւրին: Ետա ազգերի պետեր կային նրան հնազանդուած: Ոչ մէկը չէր արժանացել այս մեծ ուշադրութեան որ վիճակուեց Ջեւանշէրին: Սերա սիրոյ երդում կնքեցին եւ հրատեչտին Քաղաքորը « սայր նմա զալ իւր որ չէր երբեք լեալ սովորութիւն տիրեղբրապետ զոռոգին օտարազգւոյ ստեղծ զայս »:

Վերադառնալիս Ջեւանշէր հանդիպեց Գրիգոր Մամիկոնեանին Արուճ զերկաքաղաքում, եկաւ նրա տեսութեան նաեւ Անաստաս

1) Brosset, M. Additions et Eclaircissements à l'histoire de la Géorgie, էջ 476, ի թիւս բազմաթիւ սլաւոնքի գրքում է՝ կոստանդի եկաւ Աղուամի Գուրգր զիւղը, dans la 13<sup>e</sup> année de son règne, ուր իր սրբազանքիւնն է համաձայն Սեբեոսի եւ խորթ կապանկառուացում:

Կաթողիկոսը: Հասաւ վերջապէս իշխանը Գարդման եւ « իսկ եւ իսկ մտանէր ի արկի ապականին իւրոյ»: «Դեղազեղչներ», այսինքն նկարչներ, զորժի լծեց նկարազարդեղելու շինած տաճարը: Երեք տարի անցաւ եւ թագաւորը նորէն հրաւիրեց նրան իր մօտ (Տ. ԻՃ.):

Այստեղ ալ ճարտասանութիւնը ինզդել է պատմութիւնը: Զեւանչէրի Դամասկոս գնալու նկարագրութիւնը պատմական չէ: Գնայր հասնօրէն սիսաւ է, բայց տարին սիսալ է: Պատմութիւնը ուզում է հաստատացնել որ Աղուանից իշխանը զնաց խալիփայի մօտ երբ Դամասկոս վեցերորդ տարին էր որ մայրաքաղաք էր ճանաչուել: Մուսախա Տոչակեց Դամասկոս մայրաքաղաք 662 թուին, վեցերորդ տարին, հաշուելով 662, կը լինի 667: Պատմագրի ակնարկը թէ նոյն տարին Հոռոմոց կայսրը անպարեց հետաւոր կղզիներ, ստոյգ չէ: Ակնարկը վերաբերում է Կոստանդ կայսրին որ արդարեւ իր աթոռը տեղափոխեց Սիկիլիա, բայց այս եղաւ 662 թուին եւ ոչ 667: Երկու թուերից նախնորելին է պատմագրի տեսակէտեց 667, որովհետեւ Դամասկոս գնաց Զեւանչէր շոնաց թագաւորի հետ 665ին խաղաղութիւն կնքելուց յետոյ: 667 թիւը ցոյց է տալիս որ անմիջապէս յետոյ չէ գնացել այլ երկու տարի անց 665էն: Գրիգոր Մամիկոնեան այդ միջոցին իշխան էր Հայոց (662-685), ինչպէս եւ Անաստաս Կաթողիկոս (661-668) եւ ուրեմն նրանց յիշողութիւնը գէթ ժամանակագրական անպատեհութիւն չունի:

Պէտք կարծում որ Զեւանչէր Դամասկոս գնացած լինի 667ին: Աւելի հասանազան անք համարում պատմագրի միւս ցուցումը՝ կայսրի Սիկիլիա տեղափոխութեան տարին, միայն պատմագիրը սխալուել է կարճելով, որ այս ղէպըը տեղի ունեցաւ Դամասկոսի աթոռանիստ դասնալու վեցերորդ տարին: Դէպքը վերաբերում է 662ին եւ կարծում ենք Աղուանից իշխանը Դամասկոս գնաց սոյն այս տարին:

Պատմագրի նկատողութիւնը թէ կայսրութիւնը տկարացել էր եւ խալիփայութիւնը զօրացել, ուստի եւ Զեւանչէր ընտրեց խալիփայի կողմը, անընդունելի է 667 թուի նկատմամբ:

Ոչինչ էր փոխուել նրանց վիճակի մէջ որ առիթ տար այդպիսի դատողութեան: Մինչդեռ 662 տարին աւելի է սրտաշանում պատմագրի հոյակացքին, երբ Մուսախա վերջ տալով քաղաքացիական կռիւներին, եւ Կոստանդ լքելով մայրաքաղաքը, կարող էին այն սպաւորութիւնը թողնել հանրութեան վերայ թէ ոյժի կշիռը հակուում էր Արարների կողմը: Հայաստանը անցաւ Արարներին 652 թուին եւ այդպէս մնաց մինչեւ 682: Համապատասխան պատմութիւնը ժամանակագրոր երեւոյթ էր: Նոյն վիճակն ունեցան եւ Վիրք եւ Աղուանք: Մուսախայից, աւելի ճիշդ նրա որդու Եղիշի մահից յետոյ նորից սկսուեցին զահակալական կռիւներ: Հայերն օգտուելով այս հանգամանքից փորձեցին թօթափել արաբական լուծը: Այս առթիւ Դեւանդ պատմագիրն (էջ 15) ասում է. «Նաղարեցին ի ծառայութենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք, ծառայեալ նոցա ամու և»: Ապօստմբութիւնը տեսեց երեք տարի, շորբորդ տարին Գրիգոր Մամիկոնեան, շարժման ղեկավարը, ընկաւ Մազարաք ճակատում 685 թուին: Երեսնամեակ ծառայութիւնը պէտք է համարել 652ից մինչեւ 682: Պատմագիրը մեծ կշիռ չէ տալիս Համաղապի սուլթանութեան: Ամէն պարապայիս Մուսախա վերականգնեց 662 թուին խախտուած դրութիւնը Հայաստանում: Աղուանք և Վիրք Հայոց հետ համերայն էին եւ հասնօրէն նրանք եւս հպատակեցին Արարներին 662 թուին: Եթէ Կաղանկատուացին հիմն ունի այդ քաղաքակարգ փոփոխութիւնը վերաբերու Զեւանչէրի նախաձեռնութեան, այդ պէտք է կատարուած լինի միաժամանակ Հայերի հետ 662 եւ ոչ թէ տարիներ յետոյ 667ին: Դամասկոսի աթոռանիստ լինելու վեցերորդ տարին ճշդիւ պահել է, հակառակ պատմագրի սխալ հարուին, փոփոխութեան իսկական թուականը:

Երեք տարեց յետոյ, ուրեմն 670ին, Մալիխան նորից հրաւիրեց Զեւանչէրին աւելի մեծ պատիւներ տալու համար: Ձճոյք քաղաքին իրաւադիպչ Եկեալ էին յանձն ասնու գլուծ հարկազրութեան որդոյն Հայաբուծ, կարծում է միք պատմագիրը, իրելով որ Կոստանդին կայսրը սպանուել էր իր թագաւոր-

րութեան 30րդ տարին, ուրեմն 670ին, նոյն տարին երբ Ջեւանշէր զնաց Գամասկոս: Մեծամեծ պատիւներէ արժանացաւ Աղուանից իշխանը. Պալիփան «զհարպապտ եղորն իւրոյ ապարանս ի հանգիստ նմա յօրինել հրամայէր եւ յրնթրիս միշտ ընդ իւր նստել ի սեղան»: Կայսերական պատմաւորները, տեսնելով նրա մերձաւորութիւնը արաբական պետին, դիմեցին նրա բարեխօսութեան: Պալիփան շնորհեց Ջեւանշէրին հնդկական մի փիղ եւ մի պապկայ (թութակ): Շնորհեց նաեւ «սուսեր պողովատիկ, ոսկեպատեան, մարգարտահոծ գեղաշարեալ, պատմուճանս ոսկեհուս ստաւրակ եւ դիպակ ազդիբերան եւ զուարճատեսիլ ծիրանիս», «յիսուն եւ երկուս ձիս երազաքայս, յորս ինքն թաղաւորն նստէր»: Պայիփիլ հրամայեց «տիկնաց դժխոյին», այսինքն իր առաջին կնոջ պատրաստել Ջեւանշէրի կնոջ համար «գլխազուհեաց հրաշապածոյճ գեղազարդութեան մետաքսառէջ եւ ոսկեհիւսակ զգեստ»: Իշխանի հետեւորդներին եւս որ մօտ 50 հոգի էին ընծայեց «դիպակս եւ ճեղենակս»:

Աւելին կայ: Թաղաւորը նրան տուեց «Միւ-

նաստանեաց իշխանութիւնը» եւ թախանձեց որ յանձն առնէ իշխել նաեւ «յայնիկոյս դետոյն Ատրպատականացն»: Բայց Ջեւանշէր համեատութեամբ հրաժարուեց, չուզեմալով տիեզերական կողմանց միահեծան իշխանութեամբ ճոխանալ» եւ լաւ համարելով «զընտանին խորհել օգուտ»:

Ջեւանշէր ինդրեց եւ ստացաւ հարկերի թեթեւութիւն: Հրաժեշտին՝ թագաւորը «տայր նմա զաջ իւր» որպէս նշան բացառիկ մեծաբանքի: Իշխանը դարձաւ իր աշխարհը եւ փութաց գնալ «ի տուն Տեսուն», այսինքն Գարգմանի եկեղեցին, եւ զոհանալ «զանպատում պարգեացն Աստուծոյ»: Յետոյ իջաւ իր ձմերոցը, Պերոզ-Կաւատ: Անդ եղաւ «համաշխարհակահ, ժողով», շարունակում է պատմապիբը, «եւ տեսանէաք» թաղաւորական հաւը, «տեսանէաք» եւ վիճահասակ փիւղը, «տեսանէաք» եւ «զերիվարս արծեալս»:

Ն. ԱՒՈՅՑ

(Մնացեալը յաջորդ թիւով)

